Կ Ա Ր Ծ Ի Ք

Քանաքարա Խաչիկի Հայրապետյանի
«Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը
(1901-1938 թվականներին)»
Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության մասին

Քանաքարա Խաչիկի Հայրապետյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսական աշխատանքը նվիրված է Խորեն Ա. Մուրադբեկյանի շուրջ 40 տարիների հոգևոր ու հասարակական գործունեության լուսաբանմանը: Չնայած հետազոտության հիմնահարցերի մասին հրապարակի վրա առկա բազմաթիվ հոդվածների, ուսումնասիրությունների, հրապարակված արխիվային փաստաթղթերի առկայությանը՝ առաջին անգամ է փորձ արվել, իբրև ատենախոսության թեմա, գիտական հետազոտության ենթարկել Խորեն Ա Մուրադբեկյանի գործունեության բոլոր ոլորտները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, ինը ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից, հավելվածից:

Ընդունված կարգի համաձայն՝ ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, հիմնական նպատակը և խնդիրները, դրանց լուծման ուղիները և իրականացման տեսական ու մեթոդական հիմքերը, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության վերլուծությունը:

Առաջին գլխում («Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեության վաղ շրջանը (1901-1913 թթ.)») ներկայացվել է Խորեն Մուրադբեկյանի, իբրև կուսակրոն հոգևորականի, գործունեության սկզբնական փուլը, Նոր Բայազետի, ապա Գորիի եկեղեցական բարեկարգիչ եղած ժամանակ նրա ավանդը դպրոցաշինության ու եկեղեցաշինության բնագավառներում, դիրքորոշումն ու գործունեությունը 1903 թ. հունիսի 12-ի ցարական հայտնի օրենքի կիրառման ընթացքում, ինչպես նաև Երևանի առաջնորդական փոխանորդ ընտրվելու հանգամանքները և գործը մինչև 1-ին աշխարհամարտի սկիզբը:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը ժամանակի մարտահրավերներին ընդառաջ (1914-1920 թթ.)», որի 1-ին ենթագլխում համապարփակ շարադրված է նրա անձնվեր գործունեությունը Երևանի հայոց հոգևոր թեմական կառավարությանը կից գործած «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահի պաշտոնում: Վերլուծվել ու գնահատական է տրվել Մուրադբեկյանի՝ իշխանությունների

հետ ունեցած հարաբերություններին, ինչպես նաև, իբրև Մայր Աթոռի ներկայացուցիչ, Սփյուռքում ծավալած աշխատանքներին:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում և Հայ առաքելական եկեղեցին», հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո եկեղեցու դեմ իշխանությունների վարած կամայական քաղաքականությունը (դեկրետներ, որոշումներ, բռնաճնշումներ, «Ազատ եկեղեցականների» և «Անաստվածների միության» հովանավորում և այլն), որը նպատակ ուներ քայքայել, թուլացնել, վարկաբեկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու նրա միաբանության հեղինակությունը և այդ համատեքստում՝ Խորեն Մուրադբեկյանի՝ իբրև կաթողիկոսի լիազոր ներկայացուցչի և կաթողիկոսի տեղակալի գործունեությունը: Ներկայացված են այս ծանրագույն պայմաններում Խորեն արքեպիսկոպոսի կատարած բազում փորձերը Մայր Աթոռի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները լուծելու, իշխանությունների հետ տանելի հարաբերություններ պահպանելու, առճակատումներից խուսափելու նպատակով կատարված քայլերը:

Ատենախոսության չորրորդ գլուխը («Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան») ամբողջովին նվիրված է Խորեն Մուրադբեկյանի կաթողիկոսական շրջանին: Առաջին ենթագլխում վերլուծվել է կաթողիկոսական ընտրությունների ողջ գործընթացը, իշխանությունների կողմից դրանք խոչընդոտելու և ձգձգելու դրդապատճառներն ու միտումները: Երկրորդ ենթագլխում ստալինյան բռնաճնշումների ընդհանուր պատկերի համապատկերում ներկայացվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցապահպան, ազգապահպան գործունեությունը հայրենիքում և Սփյուռքում: «Ամենայն հայոց կաթողիկոսի մահվան առեղծվածը» ենթագլխում վերլուծվել է Վեհափառի մահվան հանգամանքներին առնչվող վարկածները և փորձ է արվել գալ որոշակի եզրահանգման:

Եզրակացություններում ներկայացված են աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Ատենախոսության թեման շատ արդիական է, ընդ որում, այս հարցում լիովին ընդունելով հեղինակի բերած հիմնավորումները, կուզեինք հավելել այսօր հայ իրականության մեջ նկատվող պետություն-եկեղեցի հարաբերություններում նկատվող խութերի առկայությունը:

Պետք է նշել, որ բավական բարդ է մեկ ատենախոսության սահմաններում հանգամնորեն ներկայացնել Խորեն Մուրադբեկյանի՝ հոգևոր, քաղաքական ու հասարակական գործչի ծավալած բուռն ու բազմաբնույթ գործունեությունը, սակայն ընդհանուր առմամբ ատենախոսին հաջողվել է ձեռնամուխ լինել իր առջև դրված

նպատակների և խնդիրների լուծմանը՝ ներկայացնելով կուռ կառուցվածքով աչքի ընկնող աշխատանք:

Անշուշտ, կատարված լայնածավալ աշխատանքում հնարավոր չէր խուսափել շարադրանքի ոգուն չհամապատասխանող որոշ դրվագներից, ինչպես նաև որոշակի անճշտություններից, որոնց շտկումը, մեր կարծիքով, կարող է բարձրացնել աշխատության որակը: Մասնավորապես՝

1. էջ 7 - «... նրա միջոցով խորհրդային իշխանություններին նույնիսկ հաջողվում է բարեփոխել Հայ առաքելական եկեղեցու կառավարման համակարգը՝ Ամենայն հայոց կաթողիկոսի իշխանությունը սահմանափակելու ճանապարհով»:

Համաձայն չենք նման ձևակերպման հետ, քանի որ խնդրո առարկա ժամանակաշրջանում խորհրդային իշխանությունների նպատակն ամենևին բարեփոխումները չէին:

2. Աշխատանքում փաստաթղթերից դասական ուղղագրությամբ կատարված մեջբերումների մեջ կան կոպիտ սխալներ: Օրինակ՝ էջ 18 - Գաւառի ազգաբնակչութիանը փրութիան միակ ճանապարհը դպրոցն է, որի անհրաժեշտութիւնը, դժբախտաբար, դիռ չի հասկացել գավառի ազգաբնակչությիւնը»:

3. էջ 17 - «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սինոդի որոշմամբ և Թիֆլիսի Ա մասի գործակալ *Զաքարիա քահանա Զարդեղյանի՝ 1901 թ. հունիսի 19-ի գրությամբ* Ալեքսանդր Մուրադբեկյանն ազատվում է Ներսիսյան դպրոցի ուսուցչի պաշտոնից և մտնում Ս. Էջմիածնի միաբանների շարքը»:

Որևէ քահանայի գրությամբ հնարավոր չէ ազատվել ուսուցչի պաշտոնից, առավել ևս՝ մտնել միաբանների շարքը: Հավանաբար խոսքը քահանայի միջնորդագրի մասին է:

4. էջ 19 - «Սկզբնական շրջանում նրան վիճակված չէր ավարտին հասցնել գավառի դպրոցաշինության գործը. այն հաջողությամբ է պսակվում նրա պաշտոնավարման երկրորդ փուլում»:

Մեր կարծիքով, ճիշտ չէ պնդել, որ նա ավարտին հասցրեց դպրոցաշինության գործը, քանի որ այն շարունակական գործընթաց է, կարելի է նշել, որ ավելի շոշափելի արդյունքների հասավ երկրորդ փուլում:

5. էջ 24 - «Հունիսի 7 ին կաթողիկոսն ընդունում է ևս մեկ կոնդակ... »

Կաթողիկոսը կոնդակը հրապարակում է կամ հղում:

6. էջ 25 - «Եղիշե արք. Ահարոնյան»

Եղիշե Ահարոնյանը վարդապետ է եղել:

7. էջ 32 - «այլապես բնակիչները որոշել են ընդունել հուդայականություն»:

Վստահաբար տարընթերցում է, և խոսքը հունադավության (յոյնադաւութեան) մասին է, որը նույն ուղղափառությունն է:

8. էջ 33 - «1910 թ. մայիսի 7-ին Երևանի թեմի պատգամավորական խորհուրդը և թեմական դպրոցի առաջնորդության անդամները □□□»:

Թեմական դպրոցն առաջնորդություն չուներ, հավանաբար խոսքը հոգաբարձության մասին է:

9□ էջ 37 - «...թեմական դպրոցների հոգաբարձուների խորհուրդների աշխատանքներին»:

Երևանի թեմը ուներ մեկ թեմական դպրոց, խոսքը հավանաբար հոգևոր դպրոցների մասին է:

10. էջ 38 - «1914 թ. հունիսին. մամուլում «Երևանցիներ» մակագրությամբ մի հոդված է հրապարակվում, որտեղ քննադատում ու պարսավում էին Խորեն եպիսկոպոսի ողջ գործունեությունը»: Այնուհետև բերվում է Խորեն եպիսկոպոսի պատասխանը□ «Ինձ համար ստորացուցիչ հանգամանք եմ համարում մի անստորագիր, ով գիտե ինչ հաշիվներով առաջնորդված, վռնդված մութ անձնավորության նամակի առթիվ բացատրություններ տալը»:

Լավ կլիներ, եթե ատենախոսը խորամուխ լիներ և պարզեր, որ խոսքը Երևանի թեմական դպրոցի նախկին տեսուչ Գաբրիել Սմբատյանի մասին է և պարզաբաներ վերջինիս արարքի դրդապատճառը:

11. էջ 55 - «Գաղթականների շրջանում տարածվել էին տիֆը, դիզենտերիան, որոնց հիմնական պատճառը հագուստի պակասն էր, ուստի Եղբայրական օգնության կոմիտեն ստիպված էր հիվանդանոց բացել»:

Ճիշտ չէ հիշված հիվանդությունների տարածումը կապել հագուստի պակասի հետ:

12. էջ 91 - «Պատահական չէր նաև այն, որ Խորեն արք. Մուրադբեկյանն իր համառության և իշխանությունների հետ ակտիվ բանակցությունների շնորհիվ կարողացել է Պ. Մակինցյանի միջոցով հնարավորություն ստեղծել, որ մատենադարանի՝ Մայր Աթոռից Մոսկվա տեղափոխված եզակի ձեռագրերը վերադարձվեն Հայաստան:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ նշել, որ Մայր Աթոռի թանկարժեք իրերն ու ձեռագրերը, ապահովության նկատառումներից ելնելով, Մոսկվա էին տեղափոխվել 1915 թ□:

13. էջ 101 - «1924 թ. հունվարի 1-ին Գերագույն հոգևոր խորհրդի հիմնադրմամբ Հայ առաքելական եկեղեցու պատմության մի նոր շրջան է սկսվում, երբ Մայր Աթոռը, ժամանակի հրամայականի և իշխանությունների պահանջից ելնելով, կաթողիկոսի միահեծան կառավարումից անցում է կատարում կոլեգիալ՝ բազմանձնյա, կառավարման»:

Կարծում ենք, որ խիստ չափազանցված է Գերագույն խորհրդի դերը: Ի վերջո, դրանից առաջ գոյություն ուներ Սինոդը:

14. էջ 104 - «Խորեն արքեպիսկոպոսը ստիպված էր հրաժարվել Երևանի փոխթեմակալի պաշտոնից, քանի որ նա այս դժվարին պայմաններում առավել անհրաժեշտ էր Մայր Աթոռին»:

Երևանի Հայրապետական թեմը Մայր Աթոռից դուրս գործող կառույց չէր:

15. էջ 107 - «Այսպիսով, «Ազատ եկեղեցական եղբայրություն» շարժումը, ... հետապնդում էր մեկ նպատակ՝ պառակտել, վարկաբեկել ու նսեմացնել Գերագույն հոգևոր խորհուրդը և նրա անդամներին՝ հանձին Խորեն արքեպիսկոպոսի՝ որպես անօրինական կաթողիկոսի տեղակալի՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով Ամենայն հայոց կաթողիկոսին»:

Կարծում ենք ճիշտ ներկայացված չէ «Ազատ եկեղեցական եղբայրություն» շարժման բուն նպատակը և հակասում է 108 էջում գրվածինՀ, այն է՝ «Ազատ եկեղեցական եղբայրություն» շարժման՝ մինչև 1929 թ. բոլշևիկների բացահայտ քաջալերանքով շարունակվող գործունեությունն ուղղված էր Մայր Աթոռի հեղինակության դեմ և բարենորոգումների շղարշի ներքո նպատակ ուներ թուլացնելու Ամենայն հայոց կաթողիկոսի և հոգևորականության ազդեցությունը ժողովրդի վրա»:

16. էջ 110 - Նշենք, որ այդ տարիներին եկեղեցին և նրա սպասավորները նվաստացման էին ենթարկվում ոչ միայն իշխանությունների, այլ նաև Սփյուռքում և Խորհրդային Հայաստանում տպագրվող մամուլի կողմից, որն իր ստահոդ հոդվածաշարերով առանց այն էլ պետության «աչքի փուշ» դարձած Հայ առաքելական եկեղեցուն ավելի էին հեռացնում իշխանություններից:

Ձևակերպումը հաջող չէ, քանի որ ակնհայտ է, որ մամուլը չէր կարող գործել առանց իշխանությունների իմացության, թույլտվության կամ պատվերի: Պարզապես, իշխանությունները եկեղեցու դեմ պայքարում լայնորեն օգտագործում էին նաև մամուլը:

17. էջ 114 - «Անաստվածների գործողությունների գագաթնակետը եկեղեցիների մասսայական փակումն էր, դրանք ակումբների և պահեստների վերածելը»:

Համաձայն չենք ձևակերպման հետ, քանի որ եկեղեցիները փակվում և քանդվում էին նրանցից առաջ էլ, հետո էլ, և դա դիտարկել իբրև «Անաստվածների» գործողությունների հետևանք, ճիշտ չէ:

18. էջ 122 - «Եվրոպական թեմի առաջնորդ Թորգոմ արք. Գուշակյանը»

Թորգոմ արքեպիսկոպոսը Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդն էր:

19. էջ 133 - «Այս առիթով Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Գուշակյանը 1933 թ. սեպտեմբերի 24-ին հանդես է գալիս «Լուսավորչի լուման» վերտառությամբ շրջաբերականով՝ ուղղված Երուսաղեմի հայ համայնքին, որի հիմնական նպատակն էր կազմակերպել համընդհանուր դրամահավաք ՀՀՀՈրոշ ժամանակ անց «Լուսավորչի լուման» բարեգործական ծրագիրը դուրս է գալիս Երուսաղեմի թեմի շրջանակից և լայն տարածում ստանում Սփյուռքում»:

«Լուսավորչի լումա»-ն մեր նախնիներից եկող ավանդություն է, որը ենթադրում էր կամավոր նվիրահավաք հոգուտ Մայր Աթոռի և գործել է դարեր շարունակ:

20. էջ 140 - Ամենայն հայոց կաթողիկոսի և վերը նշված երկու նվիրապետական Աթոռների առաջնորդների (խոսքը Բաբկեն Կյուլեսերյանի և Թորգոմ Գուշակյանի մասին է – Գ.Ա.) միջև սերտ համագործակցության հիմքերը դրվել էին դեռևս վաղ անցյալում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ծառայության տարիներին:

Նրանք չեն եղել Մայր Աթոռի միաբաններ և Ս. Էջմիածնում ծառայություն չեն կատարել:

21. էջ 174-175 - «1934 թ. հուլիսի 20-ի կոնդակով Սփյուռքում վերահաստատելով հայրապետական նվիրակի պաշտոնը՝ նա կարողացավ վերջ դնել Սփյուռքում տիրող պառակտիչ, կուսակցական պայքարին, ինչպես նաև հիմնել Հայ առաքելական եկեղեցու նոր թեմեր»

Ամենևին չթերագնահատելով հայրապետական նվիրակ Գարեգին արքեպիսկոպոսի գործունեությունը՝ ցավոք, չենք կարող համաձայնել, որ հաջողվեց վերջ դնել պառակտություններին ու կուսակցական պայքարին:

22. էջ 173 - Քննելով Խորեն Մուրադբեկյանի՝ դաշնակցական կուսակցությանն անդամ լինելու հարցը և հիմք ընդունելով մի շարք կարևոր փաստաթղթեր՝ փաստում ենք, որ Խորեն Մուրադբեկյանը երբեք չի եղել կուսակցական. նա ժամանակի առաջադեմ լիբերալ գործիչ էր և կողմ էր եկեղեցու բարեկարգմանը՝ ժամանակի պահանջին համապատասխան:

Կարծում ենք, պատեհ չէ քննարկել նրա կուսակցական լինել-չլինելու հարցը, քանի որ Խորեն Մուրադբեկյանը, իբրև հոգևորական, չէր կարող կուսակցական լինել: Այլ հարց է այս կամ այն քաղաքական ուժին համակրելը:

23. էջ 165 - «Սակայն, կաթողիկոսի մահվան որևէ վարկած պնդել և մյուսները հերքել չենք կարող, քանի որ Հայաստանի ազգային արխիվում, ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների արխիվում այդ փաստերը ապացուցող որևէ փաստաթուղթ մեր կողմից չգտնվեց»:

Վստահ ենք, որ նման փաստաթղթի առկայությունը որևէ նոր բան չէր տա մահվան առեղծվածը պարզելու գործին, քանի որ, բնականաբար, այն կարտահայտեր պաշտոնական վարկածը:

Անկախ նշված անճշտություններից, վրիպակներից ու թերություններից՝ ցանկանում ենք շեշտել, որ դրանց առկայությունը չի ստվերում կատարված աշխատանքի գիտականությունն ու կարևորությունը, և գտնում ենք, որ Քանաքարա Հայրապետյանի՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Խորեն Մուրադբեկյանի հոգեվոր և հասարակական գործունեությունը (1901 1938 թվականներին)» վերտառությունը կրող թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացված պահանջներին, և հեղինակը արժանի է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոս՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Գ. Ավագյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի՝ գիտական գծով տեղակալ, պ.գ.թ. Վ. Թորոսյան

19.01.2024